

Մովի և քաղցի ողբերգությունը, չքավորությունը, որ մշտապես աշխարհի ավելի լայն տարածքներ է գրավում, ուտելիքի և ռեսուրսների բաշխման անհավասարությունը մոլորակի արտակարգ վիճակներ են: Նաև քրիստոնյա եկեղեցիներն են բախվում այս հարցադրմանը, որովհետև գայթակղություն է, երբ ավելի քան մեկ միլիարդ եղբայրներ և քույրեր չունեն սնունդ կամ ջուր, մինչդեռ մարդկության մի մասն էլ ապրում է հարստության և շվայտության մեջ:

“Միլան Էքսպո 2015” համաշխարհային ցուցահանդեսը՝ իբրև թեմա կրում է «Կերակրել մոլորակը, էներգիա կյանքի համար» խորագիրը և, իհարկե, առաջացնում է հետաքրքրություններ, սպասումներ, հույսեր, ինչպես նաև տարակուսանք որոշ վատ փորձառությունների համար, որոնք բնութագրում են իրադարձության նախապատրաստությունը: Մենք՝ քրիստոնեական 17 տարբեր իրականությունների ներկայացուցիչներս, որ Միլանում Եկեղեցիների Էկումենիկ Խորհրդի մասն ենք կազմում, մեզ համակարգի մի մասն ենք զգում և այս առիթով խոստովանում ենք մեր մեղքը, սակայն ցանկանում ենք առիթից օգտվելով՝ ամենից առաջ ինքներս մեզ հիշեցնել մեր ընկերոջ նկատմամբ սիրո կարևորությունը. ուտելիքով կիսվելը հենց Աստծո՝ երկնքի և երկրի Արարչի, որ սիրո նշանն է:

Հացը մարդու կյանքի համար անհրաժեշտ տարր է, սակայն մեր պարտականությունն է հիշել, որ Հիսուս ասաց. «Միայն հացով չի ապրի մարդ, այլ՝ այն ամեն խօսքով, որ դուրս է գալիս Աստծու բերանից» (Մատթ. 4:4): Իսկ Հովհաննու Ավետարանում Աստծո Որդին հաստատում է. «Ես եմ կենաց հացը... թե՛ մեկն այս հացից ուտի, յալիտենապես կ'ապրի» (6:48-50): Ինչ վերաբերում է կյանքի էներգիային, գիտենք, որ կան շատ ռեսուրսներ աշխարհում կյանքը պահպանելու համար. վառելիքային հանածո, հիդրոէլեկտրական, արևային և հողմային էներգիա... Սակայն, կա նաև էներգիայի մեկ այլ աղբյուր, որ իշխում է մոլորակում. Սուրբ Հոգու Շնորհը, որ առաջարկում է մարդուն Աստծո հետ իրական հաղորդակցություն ունենալու հնարավորություն և նրա առջև բացում է հավիտենական կյանքը:

Բայց եւ այնպես, հստակ խնդիրներից, որ մարդկությունը բախվում է ամեն օր, չենք ցանկանում խուսափել: Կյանքի նկատմամբ հարգանքը, մարդկային արժանապատվության պահպանությունն ու խրախուսումը, նույնականությունն ու արդարությունը, ըստ մեզ, հիմքեր են իրական քաղաքի հույսի ընդհանրացման համար՝ բարի կամքի բոլոր տղամարդկանց և կանանց կառուցողական երկխոսության միջոցով:

Տեր Հիսուս Քրիստոսը, որ մեզ աղոթել սովորեցրեց. «Հայր մեր... հանապազօրեայ հացը տու՛ր մեզ այսօր» (Մատթ. 6:11), իր աշակերտներին պատվիրեց նաև. «Դու ք տուեք նրանց ուտելու բան» (Դուկ. 9:13):

Հետևաբար մաղթում ենք և, որի համար աղոթում ենք, որ “Էքսպո 2015”-ը կարողանա բեկումնային նշանակություն ունենալ աշխարհի պատկերում՝ սկիզբ դնելով տնտեսական, սոցիալական և միջավայրային իսկական կայունությանը: Ողբերգական փորձով գիտենք, որ միայնակ չենք փոխվի, ինչպես նաև ոչ ոք չի կարող մտածել մոլորակը միայնակ պաշտպանելու մասին: Միասին հնարավոր է:

Մենք՝ քրիստոնյա Եկեղեցիներս, զբաղված մշտապես ավելի գիտակից և կատարյալ միություն ունենալով՝ ճանաչում ենք մեր միասնական քայլի դժվարությունն ու գեղեցկությունը և թույլ ենք տալիս մեզ ցույց տալ եղբայրության և խաղաղության մի նոր աշխարհում հույս ունենալու իրական հնարավորությունը: Մեզնից յուրաքանչյուրը հրավիրված է լուսամուտի մոտ չմնալու, այլ ներհայելու, կազմակերպվելու, գործողության միասնություն փնտրելու՝ սկսելով նաև ամենօրյա փոքրիկ իրականություններից, ակտիվորեն մասնակցելով մեր հասարակությունների՝ արդարության և իսկական ու փոխանցվող համերաշխության փոխակերպման գործընթացներին:

Անգլիկան Եկեղեցի, Հայ Առաքելական Ուղղափառ Եկեղեցի, Ամբրոսիական Կաթոլիկ Եկեղեցի, Եգիպտոսի Ղպտի Ուղղափառ Եկեղեցի, Քրիստոնեական Բողոքական Եկեղեցի (Լութերական և Բարեփոխված), Ավետարանական Մկրտական Եկեղեցիներ, Մեթոդիստ Ավետարանական Եկեղեցի, Վալդեզյան Ավետարանական Եկեղեցի, Շվեդ Լութերական Եկեղեցի, Բուլղար Ուղղափառ Եկեղեցի, Էրիթրեայի Ուղղափառ Եկեղեցի, Եթովպիայի Ուղղափառ Եկեղեցի, Հույն Ուղղափառ Եկեղեցի, Ռումին Ուղղափառ Եկեղեցի, Ռուս Ուղղափառ Եկեղեցի, Սերբ Ուղղափառ Եկեղեցի, Փրկության Զինվորներ: